Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ



ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

13. 06. 2023

Այսօրվա նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց

վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցնել 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 10.5%

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող **լոմբարդային ռեպոյի** տոկոսադրույքը՝ **12.00 %**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից **ներգրավվող միջոցների** տոկոսադրույքը՝ **9.00 %**

2023թ. մայիսին 12-ամսյա գնաճը շարունակել է նվազել և ամսվա վերջին կազմել է 1.3%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս նվազել է՝ կազմելով 3.1%:



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկի վիճակագրություն

Համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունները շարունակում են էականորեն թուլանալ

2023 թ. երկրորդ եռամսյակում համաշխարհային և ՀՀ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի դանդաղ տեմպերը պահպանվում են, և 12-ամսյա գնաճը շարունակում է նվազել: Այդուհանդերձ, գործընկեր բոլոր երկրներում, աշխատաշուկաներից ածանցվող գնաճային ճնշումների պահպանման պայմաններում, կոշտ գներով աչքի ընկնող ապրանքների և ծառայությունների գները դեռևս պահպանվում են բարձր մակարդակներում:

Գնաճը գործընկեր երկրներում, 12-ամսյա, %



Գործընկեր երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում կշարունակեն վարել զսպող դրամավարկային քաղաքականություն:

Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքի շարժընթացը զարգացած տնտեսություններում, %



Աղբյուրը՝ BIS, Երկրների կենտրոնական բանկեր

Համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունները շարունակում են էականորեն թուլանալ

Ֆինանսական խիստ պայմանների ներքո պահանջարկի շարունակական թուլացումը նպաստում է ապրանքահումքային շուկաներում գների նվազմանը





Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի կանխատեսումներ

Պարենային ապրանքների միջազգային գներ, (2019/12 = 100)



Աղբյուրը՝ www.fao.org

2023 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ-ում դիտվում է սպասվածից բարձր տնտեսական ակտիվություն, որին հիմնականում նպաստում են շինարարության և ծառայությունների ոլորտներում արձանագրված բարձր աճերը

Աշխատանքի շուկայում դիտարկվող դրական տեղաշարժերը և արտադրողականության աճը պայմանավորում են նաև տնտեսության ներուժային աճի որոշակի ավելացում: Մյուս կողմից, պահպանվող արտաքին բարձր պահանջարկը և տնտեսությունում եկամուտների ավելացումը դրականորեն են նպաստում պահանջարկի ընդլայնմանը:

Առաջարկի բաղադրիչներ տ/տ աճ (2023Q2)



Առաջարկի բաղադրիչներ տ/տ աճ (2023)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրության կոմիտե, ՀՀ Կենտրոնական բանկի կանխատեսումներ

Արտաքին հատվածից գնաճային ազդեցության էական թուլացման, իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության և դրամի արժևորման արդյունքում գնաճային միջավայրը ՀՀ-ում շարունակում է արագ տեմպով մեղմվել

Այնուամենայնիվ, բարձր պահանջարկի և գնաճային սպասումների պայմաններում ծառայությունների և որոշ ապրանքների գնաճն ավելի դանդաղ է ճշգրտվում:

ՍԶ-ի հիմնական ապրանքախմբեր, եռ/եռ, տարեկանացված



Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրության կոմիտե, ՀՀ ԿԲ

Գնաճային սպասումների և անորոշության կշիռը (ԿԲ հարցումներ)



	2021.2	2021.3	2021.4	2022.1	2022.2	2022.3	2022.4	2023.1	2023.2
Բարձր գնաճային սպասումներ	24.4	26.5	31.2	39.9	32.3	29.2	35.7	27.9	27.5
Անորոշություն	39.4	32.4	40.6	38.2	41.1	40.4	25.4	31.6	41.8
Ցածր գնաճային սպասումներ	36.2	41.1	28.2	21.9	26.6	30.5	38.8	40.5	30.8

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ

ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

… նպատակահարմար է գտնում նվազեցնել քաղաքականության տոկոսադրույքը

… հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու պահանջարկի կարգավորում և գնաճային սպասումների կայունացում:

Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն առաջիկայում կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում, այնուհետև աստիճանաբար կավելանա և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:



Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի գնահատումներ

Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տոկոսադրույքի մակարդակի որոշման հիմքում ընկած մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ մինչև 2023թ. հունիսի 27-ը հրապարակվելիք Գնաճի հաշվետվությունում (Դրամավարկային քաղաքականության 2023թ. երկրորդ եռամսյակի ծրագրում):